

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1983 թվականի դեկտեմբերի 17-ին Մելգոնյան կրթական հաստատության հանդիսությունների դահլիճը յուրահատուկ շուք ու խորհրդավորություն ուներ: Հ. Բ. Ը Միության Նիկոպիայի մասնաճյուղի և Մելգոնյան կրթական հաստատության նախաձեռնությամբ տոնվում էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 75-ամյակը, քահանայագործման 40-ամյակը և գահակալության 28-ամյակը: Հանդեսին ներկա էին կիպրահայ գաղութի պետական ներկայացուցիչ պրն. Արամ Գալաճյանը, թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Եղիշե ծայր. վրդ. Մանճիկյանն ու ազգային այլևայլ մարմինների ներկայացուցիչներ:

Հանդեսը բացեց Հ. Բ. Ը. Մ. Նիկոպիայի մասնաճյուղի մշակութային հանձնաժողովի ատենապետ տիկ. Երան Գույումճյանը: Նա գեղեցիկ և կուռ խոսքով բնութագրեց Վեհափառ Հայրապետի կաթողիկոսական բազմերես գործունեությունը՝ ընդգծելով հատկապես Վեհափառի դերը՝ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման և մանավանդ հայրապետական այցելություններով Սփյուռքում ազգային նոր ոգի արթնացնելու մեջ:

Ապա բարձր դասարանցիների վարպետ կատարումով ներկայացվեց Հ. Օշականի «Ոսկե Ուռնակ» խորհրդապատկերը, ուր պատկերվում է Էջմիածնի հիմնարկեքը աստվածային միջամտությամբ: Բեմադրող ուսուցիչ Սեպուհ Աբգարյանը բեմադրությունը կուգորդել էր գեղեցիկ երաժշտությամբ և Մայր տաճարի՝ ամբողջ բեմի գրավող նկարով:

Ներսես Կատարի «Էջմիածնի 1680-ամյակին» ներբողական բանաստեղծությունը մեծ ներշնչումով արտասանեց Դ դասարանցի Արմեն Ուրնեշյանը: Հաճելի էր լսել առաջին դասարանցի մանչերի նորակալմ երգչախմբի երգերը «Էջմիածին» և «Վազգեն Շինարար» երգերի խանդավառ կատարումով, որից հետո Զ դասարանի աշակերտուհի Նորա Փափազյանը արտասանեց Ն. Կատարի երկրորդ ներբողական բանաստեղծությունը:

Ապա օրվա բանախոս, Մելգոնյան կրթական հաստատության հայոց լեզվի և գրականության, հայ մատենագրության և գրաբարի ուսուցիչ Երվանդ Մելքոնյանը զեկուցում կարդաց Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության մասին: Նախ վեր հանեց Վեհափառի կենսագրության հիմնական գծերը, ապա բնութագրեց Վեհափառին իբրև մարդ, մանկավարժ, մտածող և կաթողիկոս: Զեկուցողը հատկապես ընդգծեց Նորին Սրբության շինարարական գործունեությունը, որի շնորհիվ բազմաթիվ եկեղեցիներ, որոնք նախապես կիսավեր էին կամ քանդված այժմ վերանորոգված են և բարեկարգված: Զեկուցողը մատնանշեց, որ Վեհափառը մեծ ճիգ թափեց՝ Էջմիածնում վանական կյանք ստեղծելու, Մայր Աթոռի տնտեսական վիճակը բարելավելու և կայունացնելու, մշակութային կյանքը ծաղկեցնելու համար: Բանախոսը հատուկ ուշադրություն ընծայեց Վեհափառի շրջագարձային դերին՝ Հայրենիք-Սփյուռք կապերի արմատավորման և ծավալման մեջ:

Այնուհետև ելույթ ունեցավ Մելգոնյան կրթական հաստատության քառաձայն երգչախումբը, որը երկարամյա անխոնջ խմբավար Ս. Աբգարյանի ղեկավարությամբ գեղեցկորեն և խոհունկ ընկալումով կատարեց «Հայր մերը», «Եկեղեցին հայկական» և «Լուսավորչի կանթեղը» երգերը: Հանդիսականները ունկնդրեցին նաև Վեհափառի կենդանի ձայնը, ապա ընթերցվեց Նորին Սրբության օրհնության գիրը՝ ուղղված հանդեսի մասնակիցներին:

Հանդեսը փակվեց առաջնորդական փոխանորդ Տ. Եղիշե ծայր. վրդ. Մանճիկյանի «Պահպանիչով»:

ԹՂԹԱԿԻՑ